ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37460) 474144

07.12.16թ. № 2/7/16/6765-16

Ձեր_____ առ _____

<Ինֆորմացիայի ազատության կենտրոն> ՀԿ-ի
նախագահ տիկին Լ. Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 29.11.2016թ. թիվ 316-ի 7 գրության (ստացված 01.12.2016թ.) հայտնում ենք.

1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) աշխատակազմում գործում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության երկու համակարգեր: Կոմիտեի կենտրոնական ապարատում գործում է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը (որը ներդրված է գործադիր իշխանության գրեթե բոլոր մարմիններում), մյուս համակարգը կարգավորվում է <Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին> ՀՀ օրենքով: Երկու համակարգերն էլ թույլ են տալիս տարանջատելու թե՛ տեղեկություն ստանալու հարցումները, և թե՛ քաղաքացիների դիմում-բողոքները:

2. <Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին> ՀՀ օրենքով կարգավորվում է տեղեկություն ստանալու հարցումների գրանցումներն ու դասակարգումը (http://cadastre.am/page/362), իսկ վիճակագրությունը տեղադրված է կոմիտեի կայքէջում (www.cadastre.am):

Հարգանքով՝ Վ. Հասրաթյան